ԱԼՎԱՐԴ ՄԻՆԱՍՅԱՆ

Վ. ԱՐԵՎԵԼՑՈՒ «ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ. Արևելցու բառային կազմն իր գործառական և իմաստային դաշտերով միատարր չէ: Այդ շերտերի կամ խմբերի բացահայտումը կարող է պատկերացում տալ XIII դարի հայերենի բառային կազմի ոճական-գործառական հաճախականության, դրանց ծագման աղբյուրների՝ բնիկ հայկական, փոխառյալ ու բարբառային տարբերակների մասին:

Վ Արևելցու պատմության մեջ հանդես եկած բնիկ հայկական և փոխառյալ շերտերը նկատվում են և գրական լեզվի, և համաժողովրդական ու բարբառային տարբերակների մեջ:

Վ.Արևելցու պատմության մեջ առանձնացնում ենք՝ ա) հեղինակային նորակազմություններ, բ) առաջին իմաստային վկայություններ, գ) բառեր, որոնք արձանագրված չեն ՆՀԲ-ում:

ա) Հեղինակային նորակազմություններ

Վ Արևելցու պատմության մեջ հանդիպում ենք շուրջ երեք տասնյակ հեղինակային նորակազմություններ, որոնք իբրև առաջին բնագրային վկայություններ, հիշատակում են ՆՀԲ-ի հեղինակները: Ըստ վերոնշյալ բառարանի՝ այդ բառերի մի մասը գործածել է միայն Վ Արևելցին, իսկ մյուսները՝ նաև ուրիշ հեղինակներ: Նորակազմ բառերի մի մասը ներկայացված են Վ. Արևելցու երկերի աշխարաբար թարգմանության մեջ: Նորակազմ բառերի քննությունը կատարվել է դրանք բառակազմական հիմքերի բաժանման հենքով: Այստեղ առկա են հայերենի բառակազմությանը բնորոշ գրեթե բոլոր կաղապարները, ինչպես՝

1. *արմատ + արմատ* - լուսարձակ (23),
2. *արմատ+հոդակապ+արմատ*-նախահաւ, խարափաձայն (24), խորամէջ (23), պատկերագիր (17) :
3. *արմատ + ածանց + ածանց + ածանց* - լուսաւորչութիւն (50)
4. *արմատ + արմատ + ածանց* - կազագործութիւն (27)
5. *արմատ + արմատ* - քարորմ(ք) (127):

բ) Առաջին իմաստային վկայություններ

Վ.Արևելցու աշխատության մեջ հանդիպում են այնպիսի բառեր,որոնք արձանագրված չեն ՆՀԲ-ի հեղինակների կողմից,սակայն դրանց մի մասը ներկայացված են ՄՀԲ-ում[1]: Այդ բառերն են՝

1.Զամապ - (արաբական փոխառություն) - զէնէպ , այսինքն՝ տուտ, ծետ, ագի, Վիշապատուտն անուն աստեղ. «Վիշապն՝ որ ասեն զամենայն երկինս բոլորյալ է.զորոյ զտուրն և զգլուխն ռաստ և զանապ կոչեն աստղագէտքն և զխավարն արեգական և լուսնին անտի ասեն» (էջ՝ 140)

2.Կազագործություն - (արաբ. փոխ.) - կերպասագործություն, ոստայնանկություն.

«Առ սովաւ գտաւ քանդուած նկարս, և կազագործութիւն և չափ և կշիռ» (էջ 27) :

Հայերեն արմատական բառարանում հանդիպում է կազ արմատը՝ նույն իմաստով. «...կերպաս, դիպակ, մետաքս»: Արաբացված է պարսկերեն kāz կամ kaj «ցածր տեսակի մետաքս» բառից: Հիւբ. 268:

ՆՀԲ-ում հանդիպում է ռամկ.՝ կէզի, կէյիսի, գըզզ և ֆրանս. gāze «շղարշ» բառերը[2]:

3. Լիսեռն (լիսռաւ) - ծնկոսկր. «Յոսկերացն Ադամայ ետ նմա զլսռունս ծնկացն» (էջ 22):

4. Սայապես - այսպես, սույնպես. «Հայք մտին ընդ հարկաւ. սայապես և Ասորեստան...» (էջ 43):

5. Կոկոզաբան - (բուն հայ.) մեծաբերան, գոռոզ,բանիւք: Արմատական բառարանում հանդիպում ենք կոկոզ արմատի բացատրությունը՝ մեծամիտ, հպարտ: Առանձին չի գործածվել,բայց դրանից են ածանցված կոկոզաբան (Վրդն. պտմ.), կոկոզաբանել (Արծր.) բառերը: Կրկնված է *կոզ* անծանոթ պարզ արմատից[3]. «...թեքեալ ի ճոռոմ բանս կոկոզաբանիցն և կկզայօնից փիլիսոփայից» (63):

6. Կկզայօն -(բուն հայ.) - բարձրամիտ՝ըստ ՄՀԲ-ի. «...թեքեալ ի կկզայօնից փիլիսոփայից » (63):

7. Կառապան (հուն.) - գլխավոր ամենապետ կամ համակար իշխան - Միջին հայերեն բառարանում՝կառավարիչ կուսակալ, իշխան. »Անդրեն դարցուցանեն պարգևօք, և կառապան եդին ինքեանք քաղաքին« (104):

8. Սլփավիտք - Սբ.գիրն է, » ...ըստ սլփավիտացն համարոյ« (80):

---

[1] Ռ.Ղազարյան և Հ.Մ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան,1987թ., հ. I:
[2] Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատոր II, Երևան 1973, էջ 478:
[3] Հր. Աճառյան,նշված աշխատություն,էջ 617:

9.Մազապուրծ - մազից փրկված. «Հետիոտս փախյալ միայն մազապուրծ: Մերկանդամ և մազապուրծ ապրել»:

10. Շանթակեզ առնել, լինել –շանթից կիզգվել, կայծակնահար առնել, լինել: «Զոր շանթակեզ արար տէր ի նմին գիշերի: Շանթակէզօք եղեն ի միում աւուր: Շանթակէզ լինէր ասկղեպիադէս»:

11.Նալ - բառ ռմկ. - երկալուսնաձև ի ներքանս ծիոյ կամ կօշկաց:Ետ բերել *նալ* ծանրագին և բարձրասակ և դնել ի վրայ կաթուղիկէին անւոյ եգի լիցի մզկիթ: (էջ 122)

12.Նախահաւ – proavus - նախնի, պապ. «Նոքին նախահաւն ոսկորս լեալ էր յերուսաղեմ յաւուրս տն. մերոյ յն. զն. ճգ. Ժամանեաց նմա վճիռ նախահաւուն. քանզի որդի էր և նա Ադամա» 13.

13. Ռաստ-ռաստ - Աջ, հաջող. և հաջողված դեպք. «Եւ անդ դիպին թանձր ամպքն՝ կոչեցեալ ռաստ» (էջ 140).

14. Լերդաչարչար - լարդը չարչարող, սրտամորմոք. «... որ չարչարէ զլեարդն, խորովիչ սրտի՝ աղեաց գթոյ», «Քանզի նա եղև գլուխ գերելոցն մեր և հուր աղեկէզ և լերդաչարչար և սրտակտուր աշխարհիս մեր և ազգիս»[4] :

15. Լաղապ - (արաբ. - laqab) - տիտղոս, պատվանուն. «Առաքէ նմա ընծայս, և ալամ և լաղապ (պիտ. է լաղապ) Ամին Աբդլու և սուլտան կոչէ զնա» (էջ 99):

16. Քարոմ(ք) - քարեղեն որմ. «Զգանկս դնէր ի բարձրութեան մնիրային ի չարս քարոմորմոցն» (էջ 127):

17. Լուսարձակ - լույս արձակող՝ տվող, շողշողուն . «Ասեն և ակունս լուսարձակս դնել առ պատուհանօքն»:[5]

18. Խալեֆայ - (ի-գ. արաբ.) - հաջորդ, աթոռակալ: «Սեփական անուն հայոր-դաց մահմեդի ամիրապետացն հագարացւոց. Եվ համբաւ զնմանէ ուժգին մինչև խալեֆայն երկուցեալ առաքէ նման ընծայս», «Գայ ի խալիֆայէն դեսպան» (էջ 106) :

19. Խարափաձայն (ա.) - թերևս՝ կերկերուն, կերկերաձայն (լեզվի մասին) «Եգիպտացին խառափաձայն, և հնդիկն ճճուող » (24)[6]:

20. Խիլայել – (ն.) զգեստ նվիրելով պատվել, ընծաներով մեծարել, խիլա ընծայել: «Յոթն անգամ արքունական զգեստիւք խիլայե զնա և առաքէ ի հույս»:

21. Տուղրա - (չվկայված-թուղրա, պարսկ.) - արքունի կնիք. «Եւ պատուէր պարգևօք, և տուղրայիւ գրոյ» (109):

---

[4] Ռ.Ղազարյան և Հ.Մ.Ավետիսյան,նշված աշխ., էջ 305:
[5] Ռ.Ղազարյան և Հ.Մ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան,1987թ.,հ. I,էջ 17:
[6] Ռ.Ղազարյան և Հ.Մ.Ավետիսյան,նշված աշխ., էջ19, Մժ(13-18-րդ դարեր. հ. II, Եր. 1956):

22. Խոթեալ - Խոթմոթեալ (ն.) - խթանել, խթել (չվկայված).
«Եւ ի մօտելն մտրակեալ զնա և Խոթմոթեալ անդրէն դառնայր որպէս փախստական» (հին օ-ում)[7]: (125)
23. Խարաճ - (արաբ., պարսկ.– xaraj) - հարկ, տուրք, դրամապարհակ. «Ի նոյն ամի Սարգիս ոմն Խաչենեցի կայր ի Գանձակ և առնոյր Խարաճ» (135):
24. Նֆատ - (նփատ)- «...նֆատ ծգեալ ի նաւսն՝ այրեաց երեսուն հազար արանց» (134):
25. Խեղդիչ - (ա. փխբ.) - ծանր, դժվարին. «Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր զանազան այրին և Խեղդիչ որոգայթից»[8] (164):
26. Խորամէջ - (ա.) - մեջը խորը եղող. «Արձակահիմն, Խորամէջ. լայնափողոց» (23):
գ) Բառեր,որոնք արձանագրված չեն ՆՀԲ-ում .
Այդ բառերն են՝
1. *Կճաակուռ* - պինդ կաճից՝ թաղիքից պատրաստված. «Սատակելով զզօրագլուխ նոցա զվառեալն Կճաակուռ թաղեաւ» (էջ՝54):
2. *Լուսաւորչութիւն* - (գ.) - լուսավորիչ լինելը,լուսավորական գործունեություն. «Յերեսներորդ ամի լուսաւորչութեանն իւրոյ սուրբն Գրիգոր զԱրիստակէս առաքէ ի Կեսարիա» (50):
3. *Խածեւաթ (խածեաթ-գ.)* - արաբական ծես, որի համաձայն նորընտիր իշխաններին ձևի համար շղթայում և ծեծում էին, իբրև նշան, թե սրանք անչափ հնազանդ են ամիրապետին: «Հարկանէ զնա Խածեւաթ արարեալ, որպէս թե անչափ հնազանդ է իւրում առաջնորդին» (107):
4. *Խորամէջ*-(ա.)-մեջը խորը եղող. «Արձակահիմն, Խորամէջ. լայնափողոց» (23):
5. Խոթեալ - Խոթմոթեալ (ն.) - խթանել , խթել .
«Եւ ի մօտելն մտրակեալ զնա և Խոթմոթեալ անդրէն դառնայր որպէս փախստական» (հին օ-ում), (125):

Եզրակացություններ:

1. Վ.Արևելցու «Տիեզերական պատմության» աշխատության լեզուն իր մեջ ներառում է միջին հայերենի և ժողովրդախոսակցական լեզվի միջոցներ: Հեղինակի բառային գանձարանն իր գործառական և իմաստային դաշտերով միատարր չէ: Այդ շերտերի կամ խմբերի բացահայտումը պատկերացում է տալիս XIII դարի հայերենի բառային կազմի ոճական -գործառական հաճախականու-

---

[7] Ռ.Ղազարյան և Հ.Մ.Ավետիսյան,նշված աշխ., էջ159:
[8] Ռ.Ղազարյան և Հ.Մ.Ավետիսյան,նշված աշխ., էջ215:

թյան, ծագման աղբյուրների՝ բնիկ հայկական, փոխառյալ ու բարբառային տարբերակների մասին:

2. Պատմության մեջ հանդես են եկել բնիկ հայկական և փոխառյալ շերտեր, որոնք նկատվում են և Բ գրական լեզվի, և Բ համաժողովրդական ու բարբառային տարբերակների մեջ:

3. Պատմության բառապաշարի ուսումնասիրությունից կարող ենք եզրակացնել, որ Վ.Արևելցու երկում կան շուրջ երկու տասնյակի հասնող բառային միավորներ, որոնք հեղինակային նորակազմություններ են: Նորակազմ բառերի մի մասը ներկայացված են Վ. Արևելցու երկերի աշխարհաբար թարգմանության մեջ: Նորակազմ բառերի քննությունը կատարվել է դրանք բառակազմական հիմքերի բաժանման հենքով: Այստեղ առկա են հայերենի բառակազմությանը բնորոշ գրեթե բոլոր կաղապարները: Այս երևույթը միաժամանակ պայմանավորված է հեղինակի լեզվի յուրահատկություններով և նրա անհատական լեզվամտածողությամբ:

4. Վ.Արևելցու աշխատության մեջ հանդիպում են շուրջ երեք տասնյակ բառեր, որոնք արձանագրված չեն ՆՀԲ-ի հեղինակների կողմից, սակայն դրանց մի մասը ներկայացված է ՄՀԲ-ում:

5. Վ.Արևելցու աշխատության մեջ հանդիպում են մի քանի բառեր, որոնք տեղ են գտել ՆՀԲ-ում՝ որպես իմաստային առաջին վկայություններ: Ըստ վերոնշյալ բառարանի՝ այդ բառերի մի մասը գործածել է միայն Վ Արևելցին, իսկ մյուսները՝ նաև ուրիշ հեղինակներ :

Վ.Արևելցու «Տիեզերական պատմություն» երկը հայ մատենագրության մեջ ոչ միայն պատմագիտական ու աղբյուրագիտական, այլև բանասիրական՝ լեզվական, բնագրագիտական մեծ արժեք ունի: